ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 32-Ա

«09» հունիսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 22-Լ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 23-Լ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդված-ի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության (այսուհետ՝ վարչություն) կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժինը և նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժինը

միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժին:

3. Ստեղծել նոր՝ հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժին և հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժին:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 22- Լ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 23-Լ հրամանները:

Նախարար Ա. Հարությունյան

08.06.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հ ա վ ե լ վ ա ծ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

« »_____ 2020թ.

N____ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ հանրակրթության վարչությունը հիմնական, մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է: Վարչությունն անմիջականորեն ենթարկվում է Նախարարության Գլխավոր քարտուղարին /այսուհետ՝ Գլխավոր քարտուղար/ և հաշվետու է Նախարարին և Գլխավոր քարտուղարին: Վարչության աշխատանքները համակարգում է Նախարարի համապատասխան տեղակալը:

1. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այդ թվում՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի

հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի /այսուհետ՝ Նախարարի/ և Գլխավոր քարտուղարի հրամաններով, Նախարարություն կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված նորմատիվ այլ իրավական ակտերով:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

3. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հանրակրթության վարչություն /այսուհետ՝ Վարչություն/:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության նպատակներն են՝

1) Հանրակրթական հիմնական ծրագրերի՝ նախադպրոցական, տարրական հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), հիմնական հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) և միջնակարգ հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) և արտադպրոցական ծրագրերի մշակումն ու իրականացումը.

2) կրթության բնագավառում հանրակրթության և արտադպրոցական կրթության, դաստիարակության, քաղաքացիական պաշտպանության միասնական քաղաքականության մշակումը, դրա իրականացման և վերահսկողության ապահովումը,

5. Վարչության խնդիրներն են՝

1) Հանրակրթության (այդ թվում՝ նախադպրոցական կրթության, այսուհետ՝ հանրակրթություն) և արտադպրոցական կրթության բնագավառում պետական միասնական քաղաքականության, համակարգի զարգացման հեռանկարների և գերակա ուղղությունների, միջոցառումների մշակումը, դրանց իրականացման և համակարգման ապահովումը.

2) Նախադպրոցական, արտադպրոցական և հանրակրթական (հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների

անկախ կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից, ցույց տրվող ուսումնամեթոդական օգնության աշխատանքների համակարգումը և դրանց գործունեության համակարգումը.

3) Նախարարության ենթակայությանը հանձնված հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների նպատակային գործունեության պայմանների բարելավմանը և նյութա-տեխնիկական բազայի ամրապնդմանը նպաստելն ու օժանդակելը.

4) Կրթության զարգացման պետական ծրագրում հանրակրթության և արտադպրոցական կրթության վերաբերյալ նախատեսված միջոցառումների կատարման և հանրակրթության պետական չափորոշչի պահանջների կիրառման համակարգումը.

5) Ուսումնասիրությունների միջոցով հանրակրթական և արտադպրոցական հաստատություններում կրթության հիմնախնդիրների բացահայտումը, վերլուծությունը, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը.

8) Ուսումնասիրությունների միջոցով հանրակրթական և արտադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում սովորողների դաստիարակության հիմնախնդիրների բացահայտումը, վերլուծությունը, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը.

9) Հանրակրթական և արտադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատությունների համագործակցությանն ու զարգացմանն աջակցելը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

1) Հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժին.

2) Հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժին.

3) Հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժին:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի գործառույթներն են՝

1) «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքների մշակում և լրամշակում, վերջիններից բխող փոփոխությունների և լրացումների իրականացում.

2) Հանրակրթության և արտադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության մշակում, մասնավորապես, հանրակրթության պետական չափորոշչի, պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման), պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության, պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման, ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի, դրանց նկարագրերի, որակավորման տարակարգերի, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունների, ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, ուսուցիչների ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման, տարածքային և հանրապետական հանձնաժողովների ստեղծման և գործունեության, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու, ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների ու իրականացման, ուսումնական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մրցույթի և այլ իրավահարաբերությունները կարգավորող կառավարության որոշմամբ հաստատվող կարգերի և մշակում, լրամշակում և ներկայացում Կառավարության հաստատմանը.

3) Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունների շրջանակներում քաղաքականության մշակում, մասնավորապես, հանրակրթական պետական ծրագրերի, պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման, դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման, ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի

յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողի փոխադրման և ավարտման, ամփոփիչ ատեստավորում և որոշում ուսումնական հաստատության շրջանավարտների համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին՝ կազմակերպման. ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու, բազմահամակազմ դասարան կազմավորելու, առանձին առարկաների դասաժամերին դասարանը խմբերի բաժանելու, սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթության կազմակերպման, ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի, սովորողների հանրապետական առարկայական օլիմպիադաների, մրցույթների, մանկավարժական աշխատողների մասնագիտական մրցույթների կազմակերպման և անցկացման և այլ իրավահարաբերություններ կարգավորող կարգերի մշակում, լրամշակում և նախարարի հաստատմանը ներկայացում.

4) Մասնակցություն հանրակրթության և արտադպրոցական ոլորտի բյուջետային և ՄԺԾԾ հայտերի կազման աշխատանքներին.

5) ՀՀ կառավարության տարեկան գործունեության ծրագրի, գերակա խնդիրների սահմանում, իրականացում.

6) ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունում, վերլուծում, ամփոփում, պետբյուջեի կատարումն ապահովող ՀՀ կառավարության հանձնարարականների կատարման համակարգում.

7) Հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում.

8) Մասնակցություն կրթության զարգացման պետական ծրագրի կազման աշխատանքներին

9) Մասնակցություն զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման աշխատանքներին

10) Հանրային քննարկումների կազմակերպում և անցկացում.

8. **Հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գործառույթներն են՝**

1) Սովորողների էքստեռն փոխադրական և ավարտական քննությունների կազմակերպում.

2) Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացների կազմակերպում.

3) Պետական բյուջեով տպագրվող դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, պարբերականների տպագրության և ազգային փոքրամասնությունների դպրոցների համար դասագրքերի հրատարակում, վերահրատարակում.

4) Մասնակցություն հանրակրթության ոլորտի բյուջետային և ՄԺԾԾ հայտերի կազման աշխատանքներին.

5) Համապետական միջոցառումների կազմակերպում և անցկացում.

6) Դպրոցականների միջազգային և համահայկական առարկայական օլիմպիադաների համակարգում.

7) Պետական բյուջեով նախատեսված հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ գնումների և դրամաշնորհային մրցույթների գործընթացի իրականացում.

8) Նախարարության ենթակայության հանձնված հանրակրթական, արտադպրոցական, հատուկ, մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսհաստատությունների գործունեության համակարգում.

9) Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, ձևավորման աշխատանքների համակարգում.

10) Հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների հաշվետվությունների, սուբսիդիաների, ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփում.

11) Բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

12) Համագործակցություն ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ.

13) Քաղաքացիների դիմումների, դիմում-բողոքների պատասխանների պատրաստման, պարզաբանման և տեղեկատվության տրամադրման աշխատանքների կատարում.

9. Հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գործառույթներն են՝

1) Հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով համագործակցություն միջազգային կառույցների հետ.
2) Մասնակցում է միջազգային կազմակերպությունների և նախարարության միջ կնքվող հանրակրթության և արտադպրոցական կրթության բնագավառում համագործակցության հուշագրերի և ծրագրերի կազմման աշխատանքներին.
3) Զարգացման և ռազմավարական ծրագրերից բխող հանրակրթական և արտադպրոցական ոլորտի միջոցառումների իրականացում.
4) ՀՀ կրթության զարգացման ծրագրերից բխող ենթածրագրերի մշակում, մոնիթորինգ և հաշվետվությունների պատրաստում.
5) Կրթության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի մշակում և համակարգում.
6) Հանրակրթական հաստատություններում բնապահպանական, <<Առողջ ապրելակերպ>>, թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի համակարգում, ընտանեկան բռնության, թմրամոլության, թմրամիջոցների և այլ կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում համագործակցության ապահովում.
7) Հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում դրամաշնորհային ծրագրերի մշակում, իրականացում և հաշվետվությունների ներկայացում.
8) Հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում և հեռավար կրթության կազմակերպում և համակարգում.
9) Հատուկ և ներառական կրթության ծրագրերի մշակման, իրականացման, կազմակերպման համակարգման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային

փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովում.

10) Հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում իրականացնում է միջազգային փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում.

11) Մասնակցություն հանրակրթության և արտադպրոցական ոլորտի բյուջետային և ՄԺԾԾ հայտերի կազման աշխատանքներին.

12) Ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունում, վերլուծում, ամփոփում, պետբյուջեի կատարումն ապահովող ՀՀ կառավարության հանձնարարականների կատարման համակարգում.

13) Իրականացվող ծրագրերից բխող գնումների գործընթացի իրականացում:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ և ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության գործունեությունը վերահսկում է Գլխավոր քարտուղարը:

11. Վարչության գործունեությունը ղեկավարում և համակարգում է Վարչության պետը:

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

13. Վարչության պետը, բաժնների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

14. Վարչության պետի, բաժինների պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: